

Ավագանու կին թեկնածուները ընդամենը 5% էին



Այս տարվա նոյեմբերի 5-ի ՏԻՄ ընտրություններն աչքի ընկան կանանց պասիվ մասնակցությամբ, ինչը թերևս կարելի է բացատրել համայնքների խոշորացմամբ: Այսպես, 54 համայնքներում, այդ թվում՝ 34 խոշորացված, առաջադրվել էր 983 թեկնածու, որոնցից 49-ը կամ 5%-ը կանայք էին: Նրանք ավագանու անդամ դառնալու համար պայքարում էին միայն 24 համայնքում, որոնցից 20-ը՝ խոշորացված: Ընտրությունների արդյունքում 49 կին թեկնածուներից ընտրվել են զրեթե կեսը՝ 24-ը, ինչը նորընտիր 544 ավագանիների անդամների 4,4%-ն է կազմում: Սա լուրջ հետընթաց է, եթե հաշվի առնենք, որ 2016-ի դրությամբ ավագանիներում կանանց ներկայացվածությունը 11,8% էր:

Լոռիում պայքարող 22 կանանցից 11-ին հաջողվել է հաղթանակ տոնել



Նոյեմբերի 5-ի ՏԻՄ ընտրություններին մասնակցած 49 կին թեկնածուներից 22-ը առաջադրվել էին Լոռու մարզի համայնքներում: Նրանցից 11-ը հաղթանակ են տոնել ընդգրկվելով խոշորացված 6 համայնքների ավագանիների կազմում: Մարզի մյուս 4 խոշորացված համայնքների ավագանիների կազմում միայն տղամարդիկ են:

«Կանանց օրակարգ» քննարկում Ազգային ժողովում



Ինչպես հայտնի է, խորհրդարանական ընտրությունների ընդառաջ «ՕբսեՋեն» հիմնադրամի «ՀԱՎԱՍԱՐ» քարոզարշավի շրջանակներում ներկայացվեց «Կանանց օրակարգ», որի հիմնական նպատակն էր ընտրություններին մասնակցի քաղաքական ուժերի ուշադրությունը հրավիրել կանանց և տղամարդկանց հավասարությունն ապահովող հիմնախնդիրների վրա:

Այդ նույն համատեքստում հոկտեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում կին պատգամավորների մասնակցությամբ կլոր սեղան-քննարկում էր հրավիրվել «Կանանց օրակարգի» շուրջ: Այն ուղղված էր ընտրված պատգամավորների հետ համագործակցության հարթակ ստեղծելուն՝ ակնկալելով, որ Աժ-ում ներկայացված քաղաքական ուժերը կբարձրաձայնեն խորհրդարանի ամբիոնից «Կանանց օրակարգում» ընդգրկված խնդիրները ու կնպաստեն դրանց լուծմանը: Կլոր սեղանի ընթացքում անդրադարձ եղավ կանանց քաղաքական և տնտեսական մասնակցության ընդլայնման անհրաժեշտությանը և դրան նպաստող մեխանիզմներին:

# Կինը և քաղաքականությունը

Երևանի ավագանու կազմում կանայք 28% են



2017 ղեկսեմբեր

Անվճար հավելված  
www.WomenNet.am



«Եղեգնածորի կանանց ռեսուրս կենտրոն»-ի ակտիվիստներ Կարինե Մովսիսյանը և Մելինե Մարգարյանը՝ ավագանու անդամ Նարինե Գրիգորյանի հետ միասին շնորհակալ դպրոցականների ձեռքերով պատրաստված խաղալիքներ են նվիրել քաղաքի մանկապարտեզներին: Ամանորյա այս գեղեցիկ նախաձեռնությունն ավագանու և քաղաքացիական հասարակության միջև գործընկերային հարաբերությունների կայացման օրինակներից մեկն է միայն...

## Այսօր Հայաստանում կա 502 համայնք, որոնցից միայն 7-ն են կանայք ղեկավարում

Այս տարվա ՏԻՄ ընտրությունների արդյունքում խոշորացվեց 325 համայնք, նրանք միավորվեցին 34 փնջերում: ՀՀ տարածքային կառավարման ու զարգացման նախարարության տվյալներով՝ խոշորացումից հետո Հայաստանում հաշվվում է 502 համայնք: Նրանցից միայն 7-ն են կանայք ղեկավարում, ինչը 1,4% է կազմում:

Այդ համայնքները գլխավորող կանանց թվում են՝ Արարատի մարզի Վերին Դվին համայնքի ղեկավար Լյուդմիլա Պետրովան, Արմավիրի մարզի Արևաշատի համայնքապետ Սուսաննա Գևորգյանը և Արտամետի ղեկավար Անահիտ Դավթյանը, Գեղարքունիքի Գեղաքար համայնքի ղեկավար Կարինե Մարտիրոսյանը, Լոռու մարզի Բազումի համայնքապետ Սրբուհի Հարությունյանը, Կոտայքի Նոր Երզնկա համայնքի ղեկավար Ալինա Հարությունյանը և Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետ Ջենմա Հարությունյանը, ով այսօր խոշորացված համայնք ղեկավարող միակ կինն է: Համայնքապետ կանանցից երկուսը՝ Սուսաննա Գևորգյանը և

Ալինա Հարությունյանը, իրենց համայնքների ղեկավարման ավելի քան 20 տարվա փորձ ունեն: Հայաստանի չորս մարզերում՝ Արագածոտնում, Տավուշում, Վայոց ձորում և Սյունիքում, կին համայնքապետներ ընդհանրապես չկան: Հանրապետության որևէ քաղաք կին չի ղեկավարում: Հիշեցնենք, որ 2016-ի տվյալներով՝ Հայաստանի 793 համայնքներից 17-ն էին ղեկավարում կանայք, ինչը 2,02% էր կազմում: Հետընթացը պայմանավորված է նրանով, որ կանայք դուրս են մղվում խոշորացված համայնքներում ընթացող թե՛ ընտրապայքարից կամ էլ, ի սկզբանե ցածր շանսերը գնահատելով, չեն առաջադրվում:



### ՏԻՄ ընտրություններ - 2017



### Համայնքապետի թեկնածու երեք կանանցից երկուսը դուրսվել են

Նոյեմբերին կայացած ՏԻՄ ընտրություններում համայնքների մեծ մասում ղեկավար ընտրվելու համար առաջադրվել են գործող համայնքապետները: Գրանցված 104 թեկնածուներից միայն 3-ն էին կին: Նրանք պայքարում էին Լոռու մարզի խոշորացված Օծուն, Գեղարքունիքի մարզի Գեղաքար ու խոշորացված Գեղամասար համայնքներում: Ընտրությունների արդյունքում համայնքապետի թեկնածու երեք կանանցից երկուսը պարտվել են: Ընտրվել է միայն մեկը՝ Կարինե Մարտիրոսյանը, այն էլ ոչ խոշորացված Գեղաքար համայնքում: Նրա օգտին քվեարկել էր 67 մարդ, իսկ մրցակիցը՝ անկուսակցական Ռաֆիկ Սաֆարյանը, ստացել էր 19 ձայն: Կարինե Մարտիրոսյանը գյուղը ղեկավարում է 2012-ից: Գեղարքունիքի հաջորդ խոշորացված Գեղամասար համայնքի ղեկավարումը ստանձնելու համար պայքարում էր ՀՀԿ-ական երկու ներկայացուցիչ: Կուսակցությունն առաջադրել ու սատարում էր Ջոյա Գևորգյանին, ով 1996-ից ղեկավարել է Շատրոբեց համայնքը: Նրա օգտին քվեարկել էր 1392 ընտրող, նրա մրցակից, ինքնաառաջադրված Հակոբ Ավետյանը ստացավ 2078 ձայն:

Լոռու մարզի Օծուն համայնքում ինքնաառաջադրված անկուսակցական Դոնարա Հախինյանի օգտին 64 ընտրող էր քվեարկել: Այստեղ հաղթել էր գործող գյուղապետ, ՀՀԿ-ի կողմից առաջադրված Արսեն Տիտանյանը, ով 1885 ձայն էր ստացել: Երրորդ թեկնածուի՝ Բարսեղ Այվազյանի օգտին 1852 ընտրող էր քվեարկել:

Հարցուղասախան

«Ինչպիսի՞ն պետք է լինի համայնքապետը»...



Շիրակի մարզի խոշորագույն Ամասիայի համայնքապետ Ջեննա Գարունյանը ընտրվել է 2016-ին: 334 անդամ է: Ամուսնացած է, ունի մեկ զավակ:



Արարատի մարզի Վերին Դվին համայնքի ղեկավար Լյուդմիլա Պետրովան պաշտոնը ստանձնել է 2004-ից, վերջին անգամ վերընտրվել է 2014-ին: Անուսնացած է, ունի երեք երեխա:



Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղական համայնքի ղեկավար Կարինե Մարտիրոսյանը պաշտոնը ստանձնել է 2012-ից, վերջին անգամ վերընտրվել է այս տարի: 334 անդամ է, ամուսնացած է, ունի երկու որդի:



Լոռու մարզի Քաղուն համայնքի ղեկավար Սրբուհի Գարունյանը պաշտոնը ստանձնել է 2008-ից, վերջին անգամ վերընտրվել է 2016-ին: 334 անդամ է, Ամուսնացած է, ունի 1 դուստր:

Գարունյանը իմանալ ժողովրդի հոգեբանությունը, համայնքի ղեկավարը պետք է կարողանա իր գյուղացու ցավով տառապել, ուրախությամբ ուրախանալ: Եթե ժողովրդի հետ չչվիկեց, կապ չունեցավ, համայնքի ղեկավարը չի կարող երկար մնալ պաշտոնին ու աշխատել ժողովրդի հետ:

Խոշորացված համայնքներ

Ավագանիներում կանանց թվի նվազման միտումը դաժնանում է

Խոշորացման արդյունքում կանանց տոկոսային ներկայացվածությունը ավագանիներում նվազել է, ընդհանուր առմամբ, ավելի քան 2 անգամ, իսկ որոշ մարզերում՝ 3-6 անգամ: Այս եզրակացության կարելի է գալ՝ վերլուծելով նոյեմբերի 5-ին կայացած խոշորացված 34 համայնքների ՏԻՄ ընտրությունների արդյունքները:

Սինչ խոշորացումը 34 փնջերում ընդգրկված 325 համայնքներն ունեցել են ավագանու 2059 անդամ, որոնցից 250-ը կամ 12%-ը կանայք են: Ընտրություններին 769 առաջադրված թեկնածուների թվում 41-ը կամ 5,3 %-ը կանայք էին, ընդ որում, նրանք առաջադրվել էին միայն 20 համայնքներում:

Լոռիում 61 համայնք ներառվել է 10 փնջում Ավազերի, Ախթալա, Ստեփանավան, Տաշիր, Օձուն, Գյուլագարակ, Ընդ, Լոռի Քերո, Սարչապետ, Մեծավան: Սինչև խոշորացումը 61 համայնքների ավագանիների անդամների թիվը եղել է 365, որոնցից 76-ը կամ 20%-ը կանայք էին: Խոշորացված տասն համայնքներն ընդհանուր առմամբ ունեն ավագանու 120 անդամներ, որոնցից կանայք 12-ն են կամ ընդամենը 10%-ը:

Տավուշում 17 համայնք մտել է Բերդ փնջի մեջ: 17 համայնքներն ընդհանուր առմամբ ունեցել են ավագանու 98 անդամ, որոնցից 13-ը կամ 13,2 %-ը կանայք են: Խոշորացված Բերդն այժմ ունի ավագանու 15 անդամ, որից միայն 1-ն է կին կամ 6,6%-ը:

Սյունիքում 48 համայնք միավորվել է երեք փնջում Կապան, Քաջարան և Սիսիան: Սինչ խոշորացումը այս համայնքների ավագանիներն ունեցել են 264 անդամ, որոնցից 54-ը կամ 20,4%-ը՝ կանայք: Խոշորացված երեք համայնքներն այժմ ունեն ավագանու 41 անդամ, որից միայն մեկն է կին, ինչը 3% է կազմում:

Կոտայքում 31 համայնք միավորվել է վեց փնջերում Բյուրեղավան, Չարենցավան, Եղվարդ, Ակունք, Մեղրաձոր, Ջրվեժ: Սինչ խոշորացումը 31 համայնքներն ունեցել են ավագանու 503 անդամ, որոնցից 45-ը կամ 8,9%-ը կանայք են: Խոշորացումից հետո ավագանիների կազմում 74 անդամ կա, որից 2-ն են կանայք կամ 2,7%-ը:

Ֆրանսիայում 24 համայնքներ միավորվել են երեք փնջերի մեջ Գլաձոր, Արեճի, Եղեգիս: Սինչ խոշորացումը միավորվող համայնքների ավագանու անդամների թիվը եղել է 138, որոնցից 17-ը կամ 12,3 %-ը կանայք են: Խոշորացված երեք համայնքներն այժմ ունեն 33 ավագանու անդամ, որից միայն մեկն է կին, ինչը 3% է կազմում:

Կոտայքում 31 համայնք միավորվել է վեց փնջերում Բյուրեղավան, Չարենցավան, Եղվարդ, Ակունք, Մեղրաձոր, Ջրվեժ: Սինչ խոշորացումը 31 համայնքներն ունեցել են ավագանու 503 անդամ, որոնցից 45-ը կամ 8,9%-ը կանայք են: Խոշորացումից հետո ավագանիների կազմում 74 անդամ կա, որից 2-ն են կանայք կամ 2,7%-ը:



34 փնջերում ընդգրկված 300-ից ավելի համայնքների ավագանիներում: Սինչ խոշորացումը 12% կանայք, խոշորացումից հետո 5,5% կանայք: 2059/250 Ավագանու կազմ/փնջ, 416/23 Ավագանու կազմ/փնջ

Սինչ խոշորացումը 12% կանայք, խոշորացումից հետո 5,5% կանայք: 2059/250 Ավագանու կազմ/փնջ, 416/23 Ավագանու կազմ/փնջ

Ֆրանսիայում 24 համայնքներ միավորվել են երեք փնջերի մեջ Գլաձոր, Արեճի, Եղեգիս: Սինչ խոշորացումը միավորվող համայնքների ավագանու անդամների թիվը եղել է 138, որոնցից 17-ը կամ 12,3 %-ը կանայք են: Խոշորացված երեք համայնքներն այժմ ունեն 33 ավագանու անդամ, որից միայն մեկն է կին, ինչը 3% է կազմում:

Կոտայքում 31 համայնք միավորվել է վեց փնջերում Բյուրեղավան, Չարենցավան, Եղվարդ, Ակունք, Մեղրաձոր, Ջրվեժ: Սինչ խոշորացումը 31 համայնքներն ունեցել են ավագանու 503 անդամ, որոնցից 45-ը կամ 8,9%-ը կանայք են: Խոշորացումից հետո ավագանիների կազմում 74 անդամ կա, որից 2-ն են կանայք կամ 2,7%-ը:

Ֆրանսիայում 24 համայնքներ միավորվել են երեք փնջերի մեջ Գլաձոր, Արեճի, Եղեգիս: Սինչ խոշորացումը միավորվող համայնքների ավագանու անդամների թիվը եղել է 138, որոնցից 17-ը կամ 12,3 %-ը կանայք են: Խոշորացված երեք համայնքներն այժմ ունեն 33 ավագանու անդամ, որից միայն մեկն է կին, ինչը 3% է կազմում:

Կոտայքում 31 համայնք միավորվել է վեց փնջերում Բյուրեղավան, Չարենցավան, Եղվարդ, Ակունք, Մեղրաձոր, Ջրվեժ: Սինչ խոշորացումը 31 համայնքներն ունեցել են ավագանու 503 անդամ, որոնցից 45-ը կամ 8,9%-ը կանայք են: Խոշորացումից հետո ավագանիների կազմում 74 անդամ կա, որից 2-ն են կանայք կամ 2,7%-ը:

Ֆրանսիայում 24 համայնքներ միավորվել են երեք փնջերի մեջ Գլաձոր, Արեճի, Եղեգիս: Սինչ խոշորացումը միավորվող համայնքների ավագանու անդամների թիվը եղել է 138, որոնցից 17-ը կամ 12,3 %-ը կանայք են: Խոշորացված երեք համայնքներն այժմ ունեն 33 ավագանու անդամ, որից միայն մեկն է կին, ինչը 3% է կազմում:

Կանանց ճեպակե

«Խոշորացումը բարդացրեց կանանց համար առանց այդ էլ դժվարին պայքարը»...

Տարիներ շարունակ Դայաստանում թե՛ պետական, թե՛ քաղաքացիական հասարակության ջանքերով քաղաքականություն էր տարվում, որը միտված էր ավելացնելու կանանց թիվը ՏԻՄ-երում: Սակայն այսօր, խոշորացման մի քանի օրինակների հիման վրա, կարելի է պնդել, որ տեղերում արձանագրվել է լուրջ հետդմբաց կանանց ներկայացվածության առումով:

Արեգնադեմի երկարամյա ու հաջողված համայնքապետ Աղունիկ Զաքարյանը, ով անցյալ տարվա աշնանը պարտվեց խոշորացված Ամասիայի ղեկավարի պաշտոնի համար թե՛ ընտրապայքարում, խոշորացման գործընթացին ընդհանուր առմամբ դեմ չէ, թեև կան խնդիրներ, որոնք, իր կարծիքով, տվյալում ու փոփոխման կարիք ունեն: Առաջնայիններից մեկը հենց այն է, որ ամենաթույլ օղակը այս գործընթացում կանայք են՝ խոշորացման արդյունքում նրանց թիվը ՏԻՄ-երում ավելանալու փոխարեն նվազելու միտում ունի:

«Խոշորացված համայնքներում կանանց պայքարն ավելի դժվարանում է. առաջ էլ էր բարդ, իսկ հիմա էլ ավելի են շատացել դժվարությունները: Որովհետև եթե համայնքում ճանաչում էին տվյալ կնոջը, նրա անցած ուղին ու գործունեությունը տեսանելի էին բոլորի համար, և կինը կարողանում էր իր համայնքում քարոզչություն իրականացնել, ապա հիմա այդ գործընթացը դժվարանում է, և կնոջ հնարավորություններն այլ համայնքներում իրեն ներկայացնելու համար խիստ պակասում են»,- մշեց նա:

Նախկին համայնքապետի կարծիքով՝ խոշորացումը իսկապես տեղին է, և այս կարճ ժամանակահատվածում նա հասցրել է համոզվել, որ դա օգուտ է համայնքների զարգացման համար, բայց կանանց առումով սա, թերևս, ամենավատ սցենարն էր, որ կարող էր լինել: Դրանից ելնելով էլ պնդում է կանանց թվի նվազեցումն այդ գործընթացի ամենամեծ բացասական կողմն է և դժվար է պատկերացնել, թե ինչպես հնարավոր կլինի այդ հարցը շտկել՝ հաշվի առնելով խոշորացվող համայնքներում տղամարդկանց ընտրապայքարի կրկնապատկված ջանքերը: Նրա խոսքով՝ կանանց ղեկավարում նաև լուրջ խնդիրներ կարող է դիտվել արտաժամայա աշխատանքի հեռանկարը, մասնավորապես խոշորացված համայնքների ղեկավարում կինը ստիպված կլինի երկար ժամապարհ կտրել-անցնել...

«Չույս էլ չկա, որ կին ղեկավար կլինի»

Խոշորացումից հետո Քարահունջ համայնքի վարչական ղեկավար Լուսինե Ավետյանը նախորդ 14 տարիներին եղել է համայնքի ղեկավար:

Լուսինեի խոսքով՝ շատերին թվում է, թե այսօրվա համայնքի վարչական ղեկավարը նույնն է, ինչ համայնքապետը, սակայն դա իրականում այդպես չէ՝ վարչական ղեկավարը ինքնուրույնություն չունի, բյուջե չունի: «Լիազորությունների շրջանակը համարժեք չէ»,- մշում է Ավետյանը:

Նրա կարծիքով՝ խոշորացման գործընթացը բերեց մի իրավիճակի, երբ համայնքներն անցնում են լիովին տղամարդկանց տիրապետության տակ, ավելի «հույս էլ չկա, որ խոշորացված համայնքը կին ղեկավար կունենա»:

«Շատ ցավալի է, որ կանանց ներգրավվածությունը ՏԻՄ համակարգում գնալով քչանում է, թեև ոչ թե քչանում է՝ սխալ բառ օգտագործեցի, այլ գրեթե հավասարվում է գրոյի: Վառ օրինակն այն է, որ Տաթև խոշորացված համայնքում վարչական ղեկավար միայն ես եմ, իսկ կին ավագանու անդամ էլ չկա»,- մշեց Ավետյանը: Ընդհանուր առմամբ, ավելացրեց նա, խոշորացումը վատ գաղափար չէ, քանի որ հիմա, կարծես թե, համայնքային խնդիրներն ավելի արագ են լուծվում ստանում: Բայց պետությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն խնդիրն, որ այդ ամեն դրականին զուգահեռ կանայք են տուժում նրանց թիվը գնալով նվազում է, ջուրը գցելով վերջին տարիների ակտիվ աշխատանքը ՏԻՄ-երում կանանց ներկայացվածության ցուցանիշն ավելացնելու ուղղությամբ:

«Խոշորացվող համայնքների գաղափարը միտված է համայնքների բարեկեցությանը, նոր օրագրերի իրականացմանը, փոքր համայնքների խնդիրների արդյունավետ լուծմանը: Սակայն այն փաստը, որ կանանց մասնակցությունը ավագանիների կազմում ակնհայտորեն նվազում է, կարող է հարցականի տակ դնել այն դրական ակնկալիքները, որոնք դրված են խոշորացման գործընթացի հիմքում: Անհրաժեշտ է նոր մեխանիզմներ մտածել, որոնք հնարավորություն կտան ներգրավելու ակտիվ կանանց ներուժը իրենց իսկ համայնքներին վերաբերող որոշումների ընդունմանը:»

Փոփ քննակալայրերի ձայնը



Լուսանկարում՝ Քննարկում «Հավասար» քարոզարշավի շրջանակում՝ «Կանանց մասնակցության ընդլայնումը ՏԻՄ համակարգում՝ որպես համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման նախադրյալ» թեմայով

«Համայնքների խոչընդոտման հետ կապված կան թե՛ ռիսկեր, թե՛ հույսեր»

Վայոց ձորի Գոմք բնակավայրը Զառիթափի փնջում միավորված մյուս համայնքների մասն ունի ջրի, ճանապարհների վերանորոգման, բնակարանաշինության խնդիրներ: «Վանքաձոր» գյուղատնտեսական կոոպերատիվի նախագահ, Գոմքի նախկին ավագանու անդամ Լուսինե Ավագյանի մտահոգությունը հատկապես մանկապարտեզի բացակայությունն է: Նրա խոսքով՝ երիտասարդ մայրերը չեն կարողանում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվել, քանի որ ոչ միայն մանկապարտեզի համար, այլև տղաների բնակարանային խնամքը չկա: Վերջերս այդ կանայք կազմակերպել էին ստորագրահավաք և առաջիկայում պատրաստվում են ներկայացնել Զառիթափ համայնքի ղեկավար Սիմոն Բաբայանին: Ու թեպետ նա վերջերս լուծել է փողոցների լուսավորության, աղբաքանդակների հարցերը, բայց համայնքի բյուջեն չի բավարարում այլ խնդիրների լուծման համար: Դպրոցը վերանորոգման կարիք ունի, աշխատատեղ չկա, երիտասարդները լքում են գյուղը...

Լուսինեի խոսքով՝ խոչընդոտման հետ կապված Գոմք համայնքի բնակիչների շրջանում երբեմն լսելի են դժգոհություններ, թե ինչու կենտրոն չի համարվել հարուստ պատմություն, մշակութային հուշարձաններ, համեմատաբար շատ բնակչություն ունեցող իրենց համայնքը:

Սակայն մասնակցությունը մեծ ճանապարհ է դնում: Նախկինում մեր համայնքում ներդրումային ծրագրեր էին իրականացվում, հիմա չգիտեմ ինչպես կլինի, ժամանակը ցույց կտա: Սակայն համոզված եմ, որ համայնքների խոչընդոտման ծրագիրն իր հետ լավ բաներ էլ կբերի: Այսօր այս ծրագրի հետ կապված կան թե՛ ռիսկեր, թե՛ հույսեր ու սպասելիքներ, հետո կերևա, թե ինչ օրենքներ կփոխվեն, կամ թե ինչ լիազորություններ կտան փոքր համայնքներին, - ասում է Լուսինե:

Նա նաև խնդիր է տեսնում՝ կապված համայնքային կառավարիչների հետ, որոնց միջոցով են փոքր բնակավայրերի խնդիրները լսելի դառնում խոչընդոտման ավագանիում: Օրենքով թույլատրվում է, որ կառավարիչներն ավագանու նիստերին ներկա լինեն, թեև իրենք ոչ մի թղթի տակ չեն ստորագրում, սակայն կարող են համոզել գալ առաջարկություններով: Սակայն շատ հաճախ այդ կառավարիչները ներկա չեն լինում նիստերին և տեղյակ չեն, թե ինչ է կատարվում այնտեղ, այ, դա՛ է խնդիրը, - ասում է նա, նկատելով, որ հնարավոր է կառավարիչները թերաճում են, քանի որ իրենց չեն կանչում: Բացի այդ, նրա դիտարկմամբ, սահմանափակ լիազորությունների պարզազարկում միայն կառավարչի անձինք է կարևոր: «Նրա լավ կամ վատ աշխատանքը, և թե որքանով համայնքապետը կարող է հաշվի առնել նրա խոսքը:

«Առայժմ վաղ է նկատել առաջընթացն ու առավելությունները»  
Թեև Եվադի Խաչատրյանն ասում է Զառիթափ համայնքում, սակայն աշխատում է հարևան Գոմք համայնքի դպրոցում որպես դպրուցի տնօրեն, ուստի մտահոգված է երկու համայնքների խնդիրներով

«Առայժմ վաղ է նկատել առաջընթացն ու առավելությունները»

Թեև Եվադի Խաչատրյանն ասում է Զառիթափ համայնքում, սակայն աշխատում է հարևան Գոմք համայնքի դպրոցում որպես դպրուցի տնօրեն, ուստի մտահոգված է երկու համայնքների խնդիրներով

ու ապագայով: Նրա խոսքով՝ համայնքների խոչընդոտման գործընթացը դեռևս սաղմնային վիճակում է, առայժմ վաղ է նկատել առաջընթացն ու առավելությունները:

Սակայն մասնակցությունը մեծ ճանապարհ է դնում: Նախկինում մեր համայնքում ներդրումային ծրագրեր էին իրականացվում, հիմա չգիտեմ ինչպես կլինի, ժամանակը ցույց կտա: Սակայն համոզված եմ, որ համայնքների խոչընդոտման ծրագիրն իր հետ լավ բաներ էլ կբերի: Այսօր այս ծրագրի հետ կապված կան թե՛ ռիսկեր, թե՛ հույսեր ու սպասելիքներ, հետո կերևա, թե ինչ օրենքներ կփոխվեն, կամ թե ինչ լիազորություններ կտան փոքր համայնքներին, - ասում է Լուսինե:

Նրա համոզմամբ՝ համայնքների խոչընդոտման գործընթացը նվազեցնել է կանանց ակտիվությունը: Նախկինում իրենց համայնքի ավագանու երեք կին թեկնածուների աշխատանքը նկատելի էր գյուղի խնդիրների լուծման հարցում, մինչդեռ անցած ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրված կին ավագանի չկա:

Թեև մեր համայնքի տղամարդիկ ձեռքբերում են ավագանու կազմում իրենց կանանց տեսնելու մասնակցությունը, այնուհանդերձ այնքան էլ չափազանցված չէին ընտրություններում կին թեկնածուին աջակցել: Մինչդեռ Գոմքում առաջադրված միակ կին թեկնածուն կարող էր հաղթել:

Հարցին, թե ինչու՞ չեն սատարում կին թեկնածուին, Ն.Խաչատրյանն ասաց.

«Գյուղերում ընտրությունների ժամանակ մեծ գերդաստան ունենալն առավելություն է, ու եթե ունեն մեծ գերդաստան, ապա նրանք ինքնակամում աջակցում են տղամարդ թեկնածուի հաղթանակին, իսկ կանանց հազվադեպ են սատարում: Պակաս կարևոր չէ նաև օգնությունը, այն օգնությունը, որը համայնքում, որը, իր որակմամբ, կարծախաբից գեր է, բայց այնտեղ երեք կին ավագանու անդամ է ընտրվել: «Այնպես որ, միայն խոչընդոտման գործընթացը չէ մեղավոր կանանց ներկայացվածության նվազման հարցում», - ասաց նա:

Ի դեպ, Աշոտ Գիլոյանը մի քանի տարի առաջ, երբ պետությունը նոր-նոր էր նախաձեռնել խոչընդոտման գործընթացը, իր հարցազրույցներից մեկում կարծիք էր հայտնել, որ խոչընդոտման ավելի լայն հնարավորություններ կընձեռնի կանանց՝ ՏԻՄ-երում իրենց ներկայացվածության ցուցանիշն ավելացնելու առումով: «Ավագանու մրցակցային հնարավորություններն են աճելու, և ամեն բնակավայր աշխատելու է իր համայնքի ավելի խելացի, կայացած ներկայացուցչին «գործուղել» խոչընդոտման որպես ավագանու անդամ», - մասնավորապես, ասել էր

տարում: Պակաս կարևոր չէ նաև օգնությունը, այն օգնությունը, որը համայնքում, որը, իր որակմամբ, կարծախաբից գեր է, բայց այնտեղ երեք կին ավագանու անդամ է ընտրվել: «Այնպես որ, միայն խոչընդոտման գործընթացը չէ մեղավոր կանանց ներկայացվածության նվազման հարցում», - ասաց նա:

«Ամենակարևորը՝ բոլոր համայնքների հանդեպ հավասարաչափ վերաբերմունքն է...»

Վայոց ձորի Հերոնոս համայնքի հիմնական դպրոցի տնօրեն Նաիրա Մնացականյանի խոսքով՝ ի տարբերություն մյուս գյուղերի, Հերոնոսում մասամբ լուծված է զբաղվածության խնդիրը: Համայնքում գործող երեք ՀԷԿ-երում և «Լույսի տուն» հյուրանոցում, համայնքապետարանում և դպրոցում աշխատանքը զգալիորեն թեթևացնում է հերոնոսցիների սոցիալական վիճակը: Հերոնոսում էլ կան փողոցների վերանորոգման, լուսավորության, ոռոգման ու խմելու ջրի խնդիրներ, սակայն Նաիրա Մնացականյանի համոզմամբ՝ բանիմաց, աշխատասեր, համայնքի ու բնակիչների հանդեպ հոգատար համայնքապետի շնորհիվ այդ հարցերը աստիճանաբար լուծվելու են:

Համայնքների խոչընդոտման ծրագրով Հերոնոսը և 11 համայնքներ միավորվել են կենտրոնը եղեգին է: Համայնքների բնակիչների ոչ բոլորն էին պատկերացնում գործընթացը, որքանով է այն կշռադատված, ունի՞ ապագա, իսկ ինչու՞ կենտրոն է ընտրվում ուրիշ, ոչ իրենց համայնքը: Սրանք հարցեր են, որոնք այսօր էլ մտահոգում են միավորվող համայնքների բնակիչներին: Նաիրա Մնացականյանին նույնպես մտահոգում է գործընթացի ապագան:

Համայնքների խոչընդոտման ծրագիրը են համեմատում են 12-ամյա կրթության անցնելու հետ: Ավգրում բոլորը ոգևորված էին, իսկ հետո չգիտեմ ինչպես վարվել, աշակերտը չգիտի՞ վերջին երկու տարում ինչ է անելու: Այս առումով խոչընդոտման ծրագրի արդյունավետությունն էլ որոշ ժամանակ անց կերևա միայն:

Մ.Մնացականյանի համոզմամբ՝ որպես կենտրոն ընտրվել է համեմատաբար բարենպաստ աշխարհագրական դիրք և հաղորդակցման ոլորտի ճանապարհներ ունեցող համայնքը, սակայն ամենակարևորը՝ բոլոր համայնքների խնդիրների հանդեպ հավասարաչափ ու բարեխիղճ վերաբերմունքն է:

Համայնքի ղեկին

Սուսաննա Գևորգյան. «Կանայք այդ խնդիրները լուծելու ներուժն ունեն»



2016 թվականին նշված ՏԻՄ համակարգի 20-ամյակը որոշ առումով «հրեշմանակ» էր Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ղեկավար Սուսաննա Գևորգյանի համար, քանի որ համայնքի ղեկավարի իր գործունեությունը համոզմունքով է տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման առաջին քայլերի հետ:

«Գյուղական համայնքներում գեներալային կարծախաբի պնդումն ավելի ամուր են, քան քաղաքներում: Հանրությունը համայնքապետի պաշտոնում ավելի շատ պատկերացնում է տղամարդուն, քան կնոջը: Շատերի համոզմամբ՝ քաղաքականությունը կնոջ տեղը չէ: Այդպես էին մտածում նաև մեր համայնքի բնակիչները 23 տարի առաջ, սակայն անցած տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքում, նկատելով իմ նվիրվածությունը, պատասխանատվությունը համայնքի ու մասնավորապես, կանանց հիմնախնդիրների հանդեպ, նրանք փոխեցին կարծիքը կին համայնքապետի նկատմամբ: Իմ գործունեության ընթացքում համոզվեցի, որ ՏԻՄ համակարգի կայացման ճանապարհին բազում խնդիրներ կան, որոնք քրտնաջան աշխատանք են պահանջում: Կարծում եմ՝ կանայք այդ խնդիրները լուծելու ներուժն ունեն», - ասում է Ս. Գևորգյանը:

Ալինա Հարությունյան. «Կինն ամեն ինչի սկիզբը դնողի, կարգավորողի ու արարողի առաքելություն ունի»



20 տարի շարունակ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի ղեկավարի պարտականությունները ստանձնած Ալինա Հարությունյանը լավ ճանաչված է ողջ հանրապետությունում: Վերջերս երկարամյա արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվեց ՀՀ նախագահի կողմից Երախտագիտության մեդալով: Ասում է՝ բազմիցս առաջադրվելով և վերընտրվելով համայնքի ղեկավարի պաշտոնում, երբեք տղամարդկանց հետ մրցակցության մեջ մտնելու կամ ինքնահաստատվելու նպատակ չի ունեցել, ուղղակի որպես երկրի քաղաքացի ու մշակույթի մարդ մտածել է իր համայնքին օգտակար լինելու մասին:

Կինն ամեն ինչի սկիզբը դնողի, կարգավորողի ու արարողի առաքելություն ունի: Դրանում են միշտ տեսել համայնքի ղեկավարի իմ առաքելությունը: Այսօր համայնքի կյանքը լիովին փոխվել է, վերանորոգվել են համայնքային մշակութային շինությունները, խմելու և ոռոգման ջրի խնդիրը հիմնավորապես լուծված է, անապատի վերածված երբեմնի մրգատու այգիներն այսօր բերքառատ են, և, որ ամենակարևորն է՝ բնակիչը վերագտել է երբեմնի խանդավառությունն ու հավատը վաղվա օրվա հանդեպ:

Ալինա Հարությունյանը վստահեցրեց, որ ձեռքբերումներով չի բավարարվելու, որ համայնքի կյանքը բարեխաղող ցանկացած նոր ու կատարյալ ծրագրի փնտրտուքը շարունակվելու է նոր սերնդի հետ, որի շարքերում գերակշռելու են կանայք և աղջիկները:

Իշխանության ժառանգ

«Միայն խոչընդոտման գործընթացը չէ մեղավոր...»

Մեր գրուցակիցը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը, համամիտ չէ այն կարծիքին, որ համայնքների խոչընդոտումը միանշանակ նվազեցնում է կանանց ներկայացվածությունը ՏԻՄ-երում:

«Խոչընդոտման գործընթացը գուցե ինչ-որ առումով բացասաբար է անդրադարձել կանանց վրա, բայց ես ցանկանում եմ շեշտել, որ ոչ թե խոչընդոտումն է ազդել, այլ մեր հարգելի կանայք, ովքեր իրենց բնակավայրում համարում էին իրենց առաջնորդ ու մասնակցում էին քաղաքական մրցակցությանը, խոչընդոտման պարագայում, չգիտեմ ինչու, խուսափում են այդ քայլին գնալ: Այսինքն՝ շատ համայնքներում կանայք նույնիսկ չեն էլ առաջադրվել ինչ-ինչ նկատառումներից կամ վախճանից դրդված, իսկ եթե չեն առաջադրվել՝ ինչպե՞ս կընտրվեին», - ասում է Աշոտ Գիլոյանը, նկատելով, որ գուցե իրենց համայնքում առաջնորդ կանայք ավելի շատ էին վստահում իրենց ուժերին, քան խոչընդոտման համայնքներում, դրա համար էլ չեն առաջադրվում:

Մեր դիտարկմանը, որ անգամ սեփական համայնքում կանայք դժվարությամբ էին հաղթահարում տղամարդկանց հետ մրցակցությունը, իսկ խոչընդոտման պայմաններում բոլոր թեկնա-

ծուների համար հավասար պայմանների ապահովման խնդիրն ավելի է բարդանում, նախարարության ներկայացուցիչը որպես օրինակ բերեց խոչընդոտման Տեղ համայնքը, որը, իր որակմամբ, կարծախաբից գեր է, բայց այնտեղ երեք կին ավագանու անդամ է ընտրվել: «Այնպես որ, միայն խոչընդոտման գործընթացը չէ մեղավոր կանանց ներկայացվածության նվազման հարցում», - ասաց նա:

Ի դեպ, Աշոտ Գիլոյանը մի քանի տարի առաջ, երբ պետությունը նոր-նոր էր նախաձեռնել խոչընդոտման գործընթացը, իր հարցազրույցներից մեկում կարծիք էր հայտնել, որ խոչընդոտման ավելի լայն հնարավորություններ կընձեռնի կանանց՝ ՏԻՄ-երում իրենց ներկայացվածության ցուցանիշն ավելացնելու առումով: «Ավագանու մրցակցային հնարավորություններն են աճելու, և ամեն բնակավայր աշխատելու է իր համայնքի ավելի խելացի, կայացած ներկայացուցչին «գործուղել» խոչընդոտման որպես ավագանու անդամ», - մասնավորապես, ասել էր

նա: Վերիշեշտվել իր ասածը՝ Գիլոյանը նշեց, որ այսօր էլ պատրաստ է կրկնելու նախկին տեսակետը, պարզապես կա մի կարևոր բայց: «Այն ժամանակ մենք ասում էինք, որ համայնքների խոչընդոտումը բերելու է ընտրական համակարգի փոփոխության, բայց այսօր դեռ ընտրություններն անցնում են ոչ համամասնական ընտրակարգով: Երբ ՏԻՄ ընտրությունները Ընտրական օրենսգրքում համապատասխան փոփոխություններից հետո անցկացվեն համամասնական ընտրակարգով և նաև քաղաքացիական նախաձեռնություններով, ինչը ենթադրում է, որ համայնքի բնակիչները ինչ-որ թեկնածուով հանդես կգան ու ընտրության կզան դրամով, ապա իրավիճակը, ես հավատացած եմ, կփոխվի», - նշեց նա, հիշեցնելով, որ համամասնական ընտրակարգը ենթադրում է կանանց մասնակցության հստակ դրույթներ և աջակցող մեխանիզմներ: Հիշեցնենք, որ համամասնական ընտրակարգով անցկացվող բոլոր ընտրություններում գործող Ընտրական օրենսգրքում քվոտա է ամրագրված, ըստ որի կուսակցությունների նախընտրական ցուցակներում թեկնածուների սեռային համամասնությունը պետք է լինի ոչ պակաս, քան 25/75:

Ինչդեռ աշխատեց փոսան

Երևանի ավագանու կազմում կանայք 28% են կազմում



Երևանի նորընտիր ավագանու 65 անդամներից 18-ը կանայք են: Այսինքն՝ կանանց ներկայացվածությունը զգալի աճել է նախորդ ավագանու կազմի համեմատ, որտեղ կանայք 10-ն էին կան 15%-ը: Կարելի է փաստել, որ երևանի ընտրություններում 25/75 համամասնությունն ամրագրող քվտան աշխատեց լավագույնս, թեպետ կուսակցությունների նախընտրական ցուցակներում կին թեկնածուները միջինում 38% էին:

Կին ավագանիներից 10-ն ընդգրկված են Հանրապետական խմբակցության կազմում (ընդհանուր՝ 46 մանդատ), 5-ը՝ «Ելք» խմբակցության (ընդհանուր 14 մանդատ), 3-ը՝ «Երկիր ժիրանի» խմբակցությունում (ընդհանուր 5 մանդատ):

ՀՀ խմբակցությունում կանանց ներկայացվածությունը 21,7% է, թեպետ կուսակցության նախընտրական ցուցակում կին և տղամարդ թեկնածուները ներկայացված էին օրենքի պահանջին համապատասխան 25/75 համամասնությամբ, և մինչև ինքնաբացարկները կուսակցության ընտրական ցուցակի առաջին 46 տեղերում 12 կին էր ընդգրկված: Ինքնաբացարկ հայտանամ թեկնածուներից ութը կանայք էին: Այժմ մայրաքաղաքի ավագանու կազմում 334 ընտրական ցուցակից 10 կանայք են ընդգրկվել՝ Աստղիկ Գևորգյանը, Աննա Ասատրյանը, Նաիրա Նահապետյանը, Ռոզա Սիրունյանը, Նատալյա Լափառյանը, Լիլիթ Բեգլարյանը, Աննա Սկրտչյանը, Ալինա Քուչկյանը, Անուշ Հայրյանը, Հասմիկ Սարգսյանը: Այսու խմբակցությունների մասով ինքնաբացարկներ չեն եղել, բացի «Ելք» դաշինքի ցուցակը գլխավորող Նիկոլ Փաշինյանից, ով Աժ պատգամավոր է: «Ելք» խմբակցության կազմում ընդգրկված է 5 կին՝ Անահիտ Բախչյանը, Անի Խաչատրյանը, Անի Սամսոնյանը, Թեհմինա Վարդանյանը, Ջարուհի Բաթրյանը: Կանանց ներկայացվածությունը խմբակցությունում 36% է, ինչն ավելին է, քան դաշինքի նախընտրական ցուցակում, որում կին թեկնածուները 33% էին կազմում:

«Երկիր ժիրանի» խմբակցության հինգ անդամներից այսօր երեք անդամ է մնացել, երեքն էլ կանայք են՝ Ջարուհի Փոստանջյանը, Սոնա Աղեկյանը, Մարինա Խաչատրյանը: Կուսակցության նախընտրական ցուցակում կին թեկնածուները 57% էին կազմում:

Այսպիսով, երևանի ավագանու ընտրություններում 25/75 քվտայի արդյունավետությունը շատ ավելի բարձր էր, քան հանրապետությունում մինչև այդ անցկացված բոլոր համամասնական ընտրություններում, այդ թվում՝ Ազգային ժողովի (18%), ինչպես նաև անցյալ տարվա Գյումրիի ու Վանաձորի ավագանու ընտրություններում (24%): Եվ եթե չլինեին կանանց ինքնաբացարկները ՀՀ-ի ցուցակից, ապա կանանց ներկայացվածությունը կարող էր և 30%-ի հասնել՝ դրանով իսկ ապահովելով կանանց, այսպես կոչված, «կրիտիկական զանգվածը» ավագանու կազմում:

Նախաձեռնություն

Առաջարկվում է Աժ-ում ստեղծել կանանց խորհուրդ



«Համայնքների խոշորագույն գործընթացի մի փուլն անցել ենք, և առկա վիճակագրությունը արդեն իսկ թույլ է տալիս արձանագրել, որ կանանց ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում ակնհայտորեն նվազել է 2-3 անգամ», - այս խնդիրը Ազգային ժողովի ամբիոնից բարձրաձայնեց «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր Շաքե Իսայանը:

«Եթե մինչև այս հանրապետությունում որևէ մարդ և քաղաք կին չէր ղեկավարում, և կանայք ներկայացված էին միայն գյուղական համայնքների ղեկավարների պաշտոններում, ապա փաստացի սկսված բարեփոխումների արդյունքում գյուղերում և ունենում ենք առեղծված կանանց ներկայացվածության առումով», - ասաց նա, նշելով, որ Ազգային ժողովը չպետք է անմասն մնա տվյալ խնդրի կարգավորումից: Պատգամավորը նաև առաջարկեց ստեղծել Աժ-ում կանանց խորհուրդ, որը կապի մեջ կլինի կառավարության համապատասխան մարմինների հետ և որի շնորհիվ գուցե կանանց ներգրավվածությունը որոշակի գործընթացներում կբարձրանա: Նա հղում կատարեց նաև միջազգային պրակտիկային, ըստ որի շատ խորհրդարաններում գործում են կանանց իրավունքների պաշտպանության հանձնաժողովներ և խորհուրդներ: Նշենք, որ պատգամավորի այս առաջարկը դեռևս մնացել է անարձագանք:

Մանկապարտեզներ

Իրականություն և նախընտրական խոսումներ

Մայրաքաղաքում բնակվող նախադպրոցական տարիքի շուրջ 8000 երեխա սպասում է մանկապարտեզ գնալու իր հերթին, նրանցից 1800-ը երեք տարեկանից բարձր են: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության գործում են 160 նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը 30.067 է:

Երևանում անվճար մանկապարտեզներ երեխաներին ընդունում են հիմնականում երեք տարեկանում: Մի քանի հազար երեխաների էլ չեն կարողանում ընդունել անգամ երեքը լրանալուց հետո:

«Երեխան մեկուկես տարեկան էր, հերթագրվեցինք Մալաթիա-Սեբաստիայի մանկապարտեզներից մեկում: Մեկ տարի ծայն չհանեցին: Գնացի մանկապարտեզ, հետաքրքրվեցի՝ դեռ ինչքան պետք է սպասեմ: Պետք է գործատուիս հետ պայմանավորվեի աշխատանքի վերադառնալու ժամկետի մասին: Ասացին՝ չենք կարող ընդունել, դեռ փոքր է, իրենից մեծեր հերթում շատ կան», - ասում է մայրաքաղաքի բնակչուհի Կ. Հակոբյանը: Նա մանկապարտեզի տնօրենին հիշեցնում է, որ աշխատող ծնողների երեխաներին կարելի է ընդառաջել: Բայց մանկապարտեզի խմբերում տեղ չկար, գերծանրաբեռնված էին: Ստիպված է եղել սպասել մինչև երեք տարեկանը լրանա, դրանից հետո էլ հեշտությամբ չեն ընդունել: Մեկ այլ ծնող՝ Կ. Հարությունյանն էլ պատմեց, որ իրենք հերթին չեն սպասել, մի քանի տարի սպասելու փոխարեն որոշել են երեխային վճարովի մանկապարտեզ տանել: Նշենք, որ Երևանում 77 ոչ պետական նախադպրոցական հիմնարկներ են գործում, որոնց ամսավճարը տատանվում է 30-100 հազար դրամի սահմաններում:

Երևանի քաղաքապետարանը չի նախատեսում հաջորդ տարի ավելացնել գործող մանկապարտեզների թիվը: Նոր մանկապարտեզի մասին խոսք չկա ոչ բյուջեի նախագծում, ոչ էլ զարգացման ծրագրում: 2018-ին նախատեսվող աշխատանքներում ընդգրկված են մանկապարտեզների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում, մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ միջոցառումների իրականացում: Հստակեցում չկա, թե ինչ միջոցով է հերթերի հիմնախնդրի կարգավորումը տեղի ունենալու:



Երևանի ավագանու ընտրություններում առաջարկված բոլոր քաղաքական ուժերն իրենց քարոզարշավների ժամանակ անդրադարձել էին մանկապարտեզների խնդրին:

«Այսօր մոտ 8000 երեխա մանկապարտեզի իր հերթին է սպասում և չի կարողանում մանկապարտեզներում ընդունվելու պայմանները: Մյուս կողմից՝ երևանի բազմաթիվ մանկապարտեզների տարածքը վարձակալության տրված է այլ անձանց», - հայտարարել էր «Ելք» ցուցակը գլխավորող Նիկոլ Փաշինյանը: Նույն դաշինքի ցուցակով առաջարկված թեկնածու Ջարուհի Բաթրյանը իր ֆեյսբուքյան էլոն գրել էր. «Երբ դառնամ ավագանու անդամ, բարձրացնելու են մանկապարտեզների աշխատանքային ժամերը մինչև 18:30-ը դարձնելու հարցը: Այլապես աշխատանքային ժամն ավարտվում է 18-ին, իսկ մանկապարտեզները դրանից մեկ ժամ շուտ են փակվում: Երկի են կարգը հորինողների երեխաներին արագիլն է մանկապարտեզից տուն տանում»:

Ընտրությունների մասնակից մյուս ընդդիմադիր ուժը՝ «Երկիր ժիրանին», հրապարակած ծրագրում և անդրադարձել է խնդրին՝ մատնանշելով իր պատկերացրած լուծումը. «Բյուջեի միջոցներով վերանորոգել մայրաքաղաքի բոլոր նախադպրոցական հաստատությունները (մանկապարտեզներ) և կառուցել նորերը, դաստիարակների ու դասակների համար ստեղծել նոր աշխատատեղեր, ինչի շնորհիվ մանկապարտեզներում մաս կվերացվեն կոռուպցիոն ռիսկեր պարունակող հերթագրումները»:

ՀՀ-ի նախընտրական ծրագրով նախատեսվում է ապահովել երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզների աշխատողների առողջապահական պարտադիր ապահովագրումը, լիարժեքորեն ապահովել նախադպրոցական կրթություն՝ մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի ամբողջական կարգավորման, ապահովել անվճար նախադպրոցական կրթության ծրագրի շարունակությունը:

Առաջարկ

Երևանի ավագանու ընդդիմադիր «Ելք» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը դիմել է քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ երևանի քաղաքապետարանի ենթակայության նախադպրոցական հաստատությունների գործունեությունն ուսումնասիրող հանձնաժողով ստեղծելու առաջարկով: Հիմնավորման մեջ մասնավորապես ասված է. «Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող նախակրթական մի շարք ուսումնական հաստատություններում անընդհատ նկատվում են չարաշահումներ աշխատանքի կազմակերպման, ապօրինի դրամահավաքների, տնօրենների, դաստիարակների, դասակների մասնագիտական գործունեության, երեխաների նկատմամբ բռնություն գործադրելու, խմբերի խտրության և այլ խնդիրների վերաբերյալ: Խնդրահարույց է նաև երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված դրամական միջոցների ծախսման արդյունավետությունը, ինչպես նաև «Օգնիր մանկապարտեզի» համացանցային կայքով հանգանակված գումարների ծախսումը»:

Մեկ հետ գրույցում Դավիթ Խաժակյանը նշեց, որ ըստ օրենքի՝ հանձնաժողովը ստեղծվում է խմբակցության պահանջով, և քաղաքապետի որոշում կան համաձայնություն դրա գոյությունն ազդարարելու համար հարկավոր չէ: Նրա խոսքով՝ մանկապարտեզների հետ կապված խնդիրը առնչվում է գրեթե յուրաքանչյուր ընտանիքի, ու բազմաթիվ բողոքները վկայում են, որ հանձնաժողովի գոյությունն իսկապես ոչ միայն արդարացված է, այլև անհրաժեշտ: «Սնդիկների շարքում են հերթերը, մանկապարտեզներում խմբերի խտրությունը, շենքային պայմանները, այդ թվում նաև՝ շենքերի օտարումները, ինչպես նաև սնունդը: Անելիք շատ կա, և մենք բավականին վճռական ենք տրամադրված», - հավելեց նա:



Համարը պատրաստվել է «Խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «Օքսթեն» Երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի, WomenNet.am տեղեկատվա-վերլուծական պորտալի և «Ընտանիքի Ակադեմիա» ՀՀ-ի հետ համագործակցությամբ, Շվեդիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Համարի վրա աշխատել են՝ Լիա Խոջոյանը, Լալա Տեր-Ղազարյանը, Գայանե Սարգսյանը, Անուշ Ներսիսյանը

Գլխավոր խմբագիր՝ Թամարա Չովմանյան էլ. հասցե՝ womennetam@gmail.com